



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐ ՈՐԱԿՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՅՈՒ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրջյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 05.05.2020 թվականի թիվ 9/4-Ա որոշմամբ կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով՝ մինչև 2022 թվականի մայիսի 5-ը պաշտոնավարման ժամկետով:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված ժամկետով՝ ութ անդամի կազմով, ներկայացուցչության հերկյալ համամասնությամբ՝**

1) **փաստաբանների պալատի նախագահը, որն ի պաշտոնե որակավորման հանձնաժողովի նախագահն է, և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված չորս անդամ.**

2) **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.**

3) **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ.**

13 մայիսի 2022թ.

թիվ 8/13-Ա

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ:

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ երկու փարի ժամկետով...:

Պալատի կանոնադրության 18.4 ենթակետի համաձայն՝ Պալատի նախագահի կողմից որպես որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամներ առաջարկվել է փաստաբաններ **Հունան Տեր-Վարդանյանի (արտոնագիր № 1108), Արսեն Սարգսյանի (արտոնագիր № 1090), Արմինե Ֆանյանի (արտոնագիր № 1262) և Գառնիկ Թուխտարյանի (արտոնագիր № 531)** թեկնածությունները:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Պալատը որակավորման հանձնաժողովի անդամների թեկնածությունների առաջարկներ է ստացել համապատասխանաբար ՀՀ արդարադատության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից և ՀՀ վճռաբեկ դատարանից:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով Պալատի նոր որակավորման հանձնաժողով կազմավորելու անհրաժեշտությունը,

դեկլարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 (4), 18.2, 18.4 կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի կողմից առաջադրված փաստաբաններ Հունան Տեր-Վարդանյանին (արտոնագիր № 1108), Արսեն Սարգսյանին (արտոնագիր № 1090), Արմինե Ֆանյանին (արտոնագիր № 1262) և Գառնիկ Թուխտարյանին (արտոնագիր № 531) ընտրել որպես Պալատի որակավորման հանձնաժողովի անդամներ:

2. Կազմավորել Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- 1) Սիմոն Բաբայան՝ ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ (ի պաշտոնե).
- 2) Հունան Տեր-Վարդանյան՝ ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1108).
- 3) Արսեն Սարգսյան՝ ի.գ.թ., փաստաբան (արտոնագիր № 1090).
- 4) Արմինե Ֆանյան՝ փաստաբան (արտոնագիր № 1262).
- 5) Գառնիկ Թուխտարյան՝ փաստաբան (արտոնագիր № 531).
- 6) Արդյո՞մ Սուլջյան՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարության

կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական.

7) Արմեն Շուքրոյան՝ ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ի.գ.թ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող.

8) Արթուր Պողոսյան՝ ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

3. Սահմանել, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու փարի ժամկետով և գործում է մինչև 2024 թվականի մայիսի 13-ը ներառյալ:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պալատի որակավորման հանձնաժողովի նորընտիր անդամներին, ինչպես նաև ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

13 մայիսի 2022թ.
թիվ 8/13-Ա
ք. Երևան